վիճակս՝ բոլոր փոխանորդք տացեն առն այնմիկ թուղթ իշխանութեան և պատուոյ անուանակոչութեամբ Հայր հայաստանեաց, ժամանակաւ երիս աւուրս, զի սա կարի ունիցի իշխանութիւն երդմնեցուցանելոյ երից անձանց, և տալոյ նոցայ իշխանութիւն տանուտէրութեան, որ 'ի ձեռին իւրեանց գոցի թուխթ փոխանորդութեան ազգէն և աշխարհէն Հայոց։

Օրինակ հրամանի բոլոր տեղակալացք եւ փոխանորդացք Հայոց առ Հայրն Հայաստանեաց։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Շնորհօքն Աստուծոյ Ամենակարողի և փոխանորդութեամբն բոլոր ազգին հայոց մեք ներքոյ ձեռնադրողս իբրև բոլոր հայք 'ի զօրութենէ բանական հոգւոյ և ազատութենէ մերմէ վիճակ արկանելով և շնորհօքն հոգւոյն սրբոյ ելանելով վիճակ 'ի յանունս Մաղաքիայ ծնօղ իշխանութեան տանն հայոց, և միաբան ընդունեցաք և տուաք իշխանութիւն Տեառն Մաղաքիայ հօրդ հայաստանեաց երիս աւուր ժամանակաւ կալոյ և մնալոյ հայրախնամ և ծնօղ իշխանութեան, և տուօղ պաշտօն իշխանութեան միմիայն երիս անձանց, և ունիս իշխանութիւն երդմնեցուցանելոյ նոյն պաշտօնատարաց 'ի վերայ սրբոյ